

ՓՈՐՁ ՊՈՍՏՍՈՒԿՏՈՒՐԱԼԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ

«Մտրուկտուրալիզմ» կամ «պոստստրուկտուրալիզմ» անվանված ուղղություններն իրականում ներառում են տարասեռ՝ հաճախ իրարամերժ տեսական սկզբունքներ, և, ինչպես նշել է Ժ.Դեբիդան, մույնքան մորաձև են համարվել, և հետևաբար շահարկվել են պատեհ-անպատեհ, իբրև տուրք մորաձևությանը, որքան ասենք «աերոդինամիկա» եզրը: Սակայն, որքան էլ հակասական լինեն դրանց կիրարկումները, այդ ուղղությունների հիմքում ընկած է Ֆ. Մոսյուրի լեզվաբանությունը, ըստ որի լեզուն մշանային համակարգ է, որի բոլոր մասերը պետք է դիտարկվեն իրենց համաժամանակային փոխազդեցության մեջ: Իսկ լեզվում տարբերություններից կամ բիմար հակադրություններից զատ՝ ուրիշ ոչինչ չկա:

Մտրուկտուրալիզմը ստեղծվեց համամյան մեթոդոլոգիական և գիտական հիմքերի վրա: Հետևելով Մոսյուրին՝ այն նպատակ ուներ բացահայտելու մշակութային և հասարակական համընդհանուր կոդերը՝ ելնելով համաժամանակյա ուսումնասիրության մեթոդից և ստեղծելու «մետալեզու», որի շնորհիվ հնարավոր կլիներ բացահայտել բոլոր գրական տեքստերի կոդային համակարգերը և հիմնել ընկալման մի երկրորդ կարգ:

Մտրուկտուրալիստներից շատերը հիմք ընդունեցին սոսուրյան բինար հակադրությունների (մշանակող/մշանակյալ, լեզու/խոսք) հիմնական գործառույթը, որոնցից մշանակողն են Լեվի-Մոտրոսի նկատած հակադրությունները՝ կոչված կերտելու «մարդկային մտքի սոցիալ-տրամաբանությունը», որն ինքնին կառուցում է բնություն/իրականություն հակադրությունն ըստ իր սեփական պատկերի: Այս հակադրությունների նպատակն է, ուսումնասիրելով միակ համակարգի բազում փոխակերպությունները, բացահայտել դրանց ընդհանրությունները և հանգել որոշ Նախա-կոդի, որ մույնական է Ոգուն: Սակայն Նախա-կոդն անհնար է բացահայտել՝ այն մշտապես ներկա է որպես որոշ Գեր-Մտրուկտուրա, ներկա է լոկ որպես բացակայություն:

Համամյան սկզբունքով են ստեղծված բինար հակադրությունները (plaisir/jouissance, lisible/scriptible) Ու.Բարթի ստեղծագործություններում, որը սեմիոլոգիական մեթոդով դիտարկում է մշակութային երևույթներն

իբրև նշանային համակարգեր: Այսպիսով, ի հայտ է գալիս մետալեզուն՝
 լեզու, որ կոչված է նկարագրելու մեկ այլ լեզու, իսկ սեմիոլոգիան
 համարվում մետալեզուների հիերարխիա: Մեմիոլոգիայի շուրջ են Բարթի
 առաջին ստեղծագործությունները՝ «Մեմիոլոգիայի հիմունքները» և
 «Լաստներ մշակույթի սեմիոլոգիայի վերաբերյալ», որոնցում նա
 դիտարկում է կոնոտացիան՝ որպես «պսևդո-տրամաբանական», իսկ
 նշանի «ռացիոնալիզացիան» հնարավոր համարում լոկ կողի սեմանտիկ
էֆեկտների միջոցով, որոնց շնորհիվ նշանը թաքցնում է իր նշանային
 բնույթը: Ըստ Բարթի՝ սեմիոլոգիան սկզբնապես կազմել է միֆերի
 բառապաշար-լեքսիկոնը, նպատակ ունենալով գաղափարախոսական
 նշանակյալի ոչնչացումը, իսկ հետագայում այն նպատակ ունեցավ արդեն
 նշանի ոչնչացումը: Հարկ է նշել, նրա՝ սկզբունքորեն անսահման
 լեզվամշակութային միավորների հղող, բառի կոնոտատիվ իմաստների
 վրա հիմնված, մի քանի հայտնի հետազոտություններ ("Le degré zero de la
 littérature", "S/Z", "Essais critiques"), որտեղ Բարթի նպատակն է
 ապակառուցանել ընթերցվող տեքստն իր թափանցիկությամբ՝
 փոխակերպելով այն ֆրագմենտար *լեքսիաների* և *կոդերի*, որոնց շնորհիվ
 ընթերցողը ստանում է «ժազում մուտքերի և ելքերի» հնարավորություն՝
 գերծ մնալով միակ գերիշխող մեկնաբանությունից: Հետագա աշխատու-
 թյուններում Ռ. Բարթը փորձեց հրաժարվել ցանկացած մետալեզվից և
 գիտագաղափարախոսական դիսկուրսից՝ կյանքի կոչելով հեղինակի
 անձնական կենսափորձի և կենսամշակութային կոնտեքստից բխող
 ուղիղ, ապատրամաբանական դիսկուրս: Այստեղ, իր իսկ նկարագրու-
 թյամբ, կարևորվում է որոշակի Տեքստ, որ գերծ է պատմանկարագրական,
 սինտագմատիկ սյուժեից, որին փոխարինելու է եկել դերերի միևնույն
 ստրուկտուրայի հարափոփոխության վրա հիմնված պարադիգմատիկ
 սկիզբը: Այսպես, օրինակ, «Ֆրագմենտներ Սիրահարի դիսկուրսի» գիրքը
 կառուցված է էքզիստենցիալ փորձի վրա հիմնված սյուժետային
 պարադիգմայի շուրջ: Ինչպես մեկնում է Բարթը, գրքում խոսողը գրի
 «ենն» է, որ մետագրական ինտերտեքստում անջատված է ընթերցողից
 գիր/ընթերցում տարածաժամանակային արարակարգով, ինչ-որ միջան-
 կյալ դիրքում՝ բենվենիստյան պատմության և դիսկուրսի միջև: Այս
 տեքստը *ես-սիյում-են-քեզ-ի* ուսումնասիրությունն է, որ չի պատկանում
 լեզվաբանությանը կամ սեմիոտիկային, այլ՝ Երաժշտությանը, որտեղ
 տիրում է հիշողությունից գերծ զուտ հնչյունի ինքնությունը: Սիրահարի
 խոսքը հեռանում է Տեքստից՝ վերածվելով դրա սիմուլյակրի՝ մմանակ-
 անը: Համակարգից օտարվելով՝ խոսք-նշանը հեռանում է նաև
 Պատկերից՝ հարելով Երևակայությանը և, հակադրվելով նշանին,
 ծառայում է որպես «կոնտր-նշան»: Այսպիսով, հաստատվում է
 ֆրագմենտար նշանային համակարգի որոշակի քվադրկարգավորվածու-

թյուն՝ միմյանց կապված բազում անժամանակ տեքստեր, որոնք առանձնանում են հեղինակի կամ կենտրոնի բացակայությամբ՝ «ապա-
ռեալությամբ»:

Այսպիսով, Ռ. Բարթը, ինչպես նաև Լականը կամ Ֆուկոն չեն կարող
հստակորեն դասակարգվել որպես ստրուկտուրալիստներ և որոշ
տեքստերում համարվում են պոստստրուկտուրալիստներ: Ռ. Բարթի
պոստստրուկտուրալիստական հայտնի տեքստերից է «Միֆոլոգիան»
(1957), որտեղ տվյալ եզրի նշանակությունն ընդարձակվել է
հասարակական հավատամքների կամ պատկերների, որոնց միջոցով
որոշարկվում և պահպանվում է տվյալ հասարակությունը: Միֆի բարթյան
հետազոտությունը ներառում է հաղորդակցության միջոցները և գովազդը՝
բացահայտելով միֆի գործառույթն իբրև երկրորդ կարգի սեմիոտիկ
նշանի: Սակայն այդ մեկնություններում բացակա է ընթերցողի գործոնը,
որ ներմուծվում է նրա կողմից լոկ 1968թ., «Հեղինակի մահը» գրքով, որտեղ
տեքստը համարվում է կողերի միացություն, որոնց միջոցով տվյալ
տեքստը, մշակույթի մաս կազմելով, կապվում է մնացյալ տեքստերին և
հավասարապես պատկանում հեղինակին, ընթերցողին և
իրականությանը: Այս ինտերտեքստուալությունը տեքստի ընկալումը
կարևորում է նույնքան, որքան դրա արարումը և հնարավոր է դարձնում
ընթերցողի ազատ ելքերն ու մուտքերը. ընթերցումը դադարում է սպառում
համարվելուց և ազատագրվում է հեղինակի գերիշխանությունից:

1960-1970թթ ստրուկտուրալիստական շարժմանը փոխարինելու
եկավ պոստ-ստրուկտուրալիզմը, որի առանցքն է Ժ. Դերիդայի
դեկոնստրուկցիայի մեթոդը: Նթե ստրուկտուրալիստներին հատուկ էր
հիմնումը գրականության պոետիկայի կամ գիտության, ապա
պոստստրուկտուրալիստները գրավեցին հակագիտական դիրք՝ մերժելով
որևէ համակարգի գերիշխանություն: Դերիդան գիտակցաբար
հրաժարվել է դիսկուրսիվ քննարկման որևէ մետալեզո կամ
կանոնակարգված, համակարգված տեսություն ստեղծելուց, սակայն
ամհնար է խոսել պոստ-ստրուկտուրալիզմի մասին՝ առանց նրա կողմից
ներմուծված բազում եզրերի կամ հիմնարար կոնցեպցիաների բնութա-
գրման: Ժ. Դերիդան սկզբնապես հարցականի տակ է դրել բինար
հակադրությունների և, ընդհանրապես, գիտականորեն օբյեկտիվ
մետալեզվի գաղափարները: Նա քննադատության է ենթարկել ոչ միայն
ստրուկտուրալիզմը, այլև Արևմտքի փիլիսոփայության մեջ գերիշխող
«աստ-լինելության մետաֆիզիկան»: Ստրուկտուրալիզմի քննադա-
տությանը վերաբերող տեքստերում Դերիդան զգուշանում է արվեստի
ստեղծագործությունների միակողմանի քննադատությունից, երբ դրանք
հանգեցվում են որոշակի քարացած ստրուկտուրայի՝ փակելով դրանց
բազում ընթերցում-մեկնությունների հնարավորությունները: Այստեղ նա

հանդես է գալիս հոգուտ ստեղծագործության անվերջ բացության
 աշխարհի՝ որպես հնարավորությունների հորիզոնի հանդես: Ըստ
 էության Դերիդան հակադրվում է ստրուկտուրալիստական մոտեցմանը
 որ արվեստի ստեղծագործության մեջ կարևորելով ստատիկ ձևը՝ որպես
 որոշ ստրուկտուրայի ամկայության վկայություն, ամտեսում է այդ
 ստրուկտուրայի մեջ չամփոփվող, սակայն ստեղծագործության էությանը
 բնորոշ դրվագներ կամ գործող անձինք: Այդպիսով, այն գերակայություն է
 տալիս ստեղծագործության ձևին՝ ի վնաս առավել էական *ուժի* կամ *էներ-
 գիայի*: Դերիդայի հետագա ուսումնասիրության ընթացքում *ձևի* և *ուժի*,
 տարածականորեն արտահայտված *ստրուկտուրայի* և *էներգիայի* նշված
 հակադրությունը ձևափոխվում է Ապոլոնի և Դիոնիսոսի հակադրությանը,
 որ պատմությունից *դուրս* գտնվելով՝ պատմության որևէ հնարավորության,
 զարգացման, պատմականության ստրուկտուրայի հիմքն է՝ որպես
 Տարբերություն: Դերիդան, մերժելով սուբյեկտի և լինելության միջև որևէ
 տրանսցենդենտ հիմնավորվածություն, ազատագրում է սուբյեկտին ոչ
 միայն անվերջանալի խորհդանիշերի և մետալեզվի գոյությունից, այլ նաև
 բինար հակադրություններից, քանզի դրանց հիմքում ոչինչն է: Սուբյեկտն
 ազատագրվում է նաև «զոգոցենտրիզմի» գերակայությունից, այսինքն՝
 անհիմն, սակայն միևնույն ժամանակ հզոր հավատամքից, որ գոյություն
 ունի լեզվից վեր ու անդին որոշ գերակա իշխանություն կամ ներկայու-
 թյուն, որոշ «կենտրոն», որ ղեկավարում է ստրուկտուրան, որ սակայն
 եզակի է իր գոյության մեջ և ենթակա չէ ստրուկտուրալ վերլուծության:
 Այս կենտրոնն իբրև թե գոյություն ունի որպես «էություն» կամ «սկիզբ», որ
 մախտորդում է լեզվին և գերակա է դրա հանդես: Հայդեգերի համար լեզուն
 լինելության պատմության համար միջոց է՝ գոյի տունը: Նա ընդգծել է
 լեզվի գերակա դերը, սակայն չի զբաղվել լեզվի կանոնակարգված ուսում-
 նասիրությամբ: Այդ ուղղությամբ մեծ ուսումնասիրություններ է կատարել
 Դերիդան՝ կիրառելով լեզվաբանությունը մետաֆիզիկայի քննադատու-
 թյան նպատակով: Դա քայլ էր գիտակցության փիլիսոփայությունից առ
 լեզվի փիլիսոփայությունը, որ հետազոտության համար նոր
 հնարավորություններ էր ստեղծում: Դերիդան փորձում է, ի հակալեշի
 ստրուկտուրալիստական ֆոնոցենտրիզմի, հնչյունակենտրոնության,
 բացահայտել քերականագիտության (grammatologie) հիմունքները, որ
 հարում է նախնական գրին, քանզի հանդգնած էր, որ հնչյունակենտրոն
 գիրը, որ նա անվանում էր Արևմուտքի մեծ մետաֆիզիկական, գիտական,
 տեխնիկական և տնտեսական արկածախնդրություն, սահմանափակված
 է ժամանակով և արդեն սպառել է իրեն: Դերիդան սկզբնապես նպատակ
 ուներ մետաֆիզիկան բարձրացնելու նոր աստիճանի՝ քերականագիտա-
 կան ուսումնասիրությունների միջոցով, որոնք դուրս են հնչյունակենտրոն
 համակարգից: Նա փորձում է քերականագիտության օգնությամբ

բացատրել լեզվի էական երևույթները գրի, այլ ոչ խոսքի մոդելով պայմանավորելու անհրաժեշտությունը: Ռացիոնալիզմը՝ եզր, որից Դերիդան պատրաստ է հրաժարվելու, գերիշխելով գրի մեջ սկիզբ է առնում արդեն ոչ Լոգոսից՝ այլ դեատրոլոգիայից, որ եթե ոչ՝ կործանում, ապա զտում է նստվածքներից, ենթադրելով Լոգոսի նշանակության մեջ թաքնված բոլոր նշանակությունների նախասկզբի դեկոնստրուկցիա կամ ապակառուցում: Նա դեկոնստրուկցիայի է ենթարկում «Աստված» կա հայդեգերյան «Ճշմարտություն» նշանակյալները, որոնք, հղելով լեզվից դուրս գտնվող տրանսցենդենտալ կոնցեպցիաների, լեզվին ենթակայության մեջ են գցում և դարձնում երկրորդական: Հայդեգերին չհաջողվեց վերջնականապես ապակառուցանել լինելության խնդիրը փիլիսոփայության մեջ այն պատճառով, որ նա «Ճշմարտություն» հասկացությունը դարձրեց հիմնարար հասկացություն այսպիսով ցանկացած քննադատությունից վեր դասելով աշխարհի լեզվական պատկերի ամբողջականությունը: Եվ քանզի Լոգոսն է թաքնված յուրաքանչյուր արտաբերված խոսքի մեջ, Դերիդան հակադրում է արևմտյան լոգոցենտրիզմին ֆոնոցենտրիզմը: Արևմտյան փիլիսոփայությունը գերակա է համարել բանավոր խոսքը՝ գրավորի հանդեպ՝ այն համարելով խոսողի գիտակցության մաքուր վկայություն, ամեն իմաստայնության աղբյուր և երաշխիք, որ ավելի մոտ է նախնականին՝ ի հակադրություն անուղղակի գրի, որ կարող է անջատվել իր իրական սկզբից և անվերջ կիրարկվել ենթատեքստից դուրս կամ շրջված: Դերիդայի կողմից Սոսյուրի հետագա քննադատությունն ուղղված է այն փաստի դեմ, որ նա լեզվաբանական վերլուծության առարկա էր համարում բանավոր խոսքը՝ զգուշացնելով գրի վտանգների և բռնատիրության մասին: Այն հակասությունը, որ նկատելի է Սոսյուրի նախագգուշացման մեջ՝ Դերիդան օգտագործում է անմիջապես նրա դեմ, քանզի, եթե գիրը ի գորտ է ազդելու խոսքի վրա, ապա կասկածելի են վերջինիս աներկբա նախնականության և առավելության վարկածները: Այսպիսով, Դերիդան դեկոնստրուկցիայի է ենթարկում Սոսյուրի եզրահանգումները՝ բացահայտելով դրանց ներսում առկա հակասությունները: Դերիդան ոչ միայն ապակառուցանում է խոսք/գիր *ենթակարգությունը*, այլ վերաբնութագրում է վերջին հասկացությունը՝ որպես արխե-գիր կամ նախագիր, որ կոչված է բնորոշելու գիրը ոչ թե ընդունված սահմանափակ իմաստով՝ որպես խոսքի գրաֆիկական գրառում, այլ՝ որպես լեզվին ընդհանրապես հատուկ վիճակ, որպես խոսքի նախա-պայման: Այս իմաստով Դերիդան գիրը բնորոշում է՝ որպես իմաստի անվերջ տեղափոխում, որ միաժամանակ և՛ իշխում է լեզվի վրա, և՛ հավերժորեն տեղակայում է այն կայուն, ինքնակարևորող գիտելիքից անդին: Դա նշանակում է, որ ոչ մի լեզու կամ դիսկուրս ի վիճակի չէ օբյեկտիվորեն վերլուծելու որևէ այլ դիսկուրս կամ լեզու: Այսպիսի

քննադատական տեքստերի միջոցով էր «ազատագրվում ընդհանուր գրամատալոգիայի» քերականագիտության ապագան»:

Այս անսպասելի անցումը գրամատալոգիային հասկանալի է դառնում բնության կամ աշխարհի Գրքի մետաֆորի միջոցով, որին հղում է Դերիդան: Հղում առ Աստծո դժվարընթերցելի, սակայն մեկնելի ձեռագիրը: Դիտարկումը աշխարհի՝ որպես «այլ աշխարհի ձեռագիր, որ մեզ վիճակված չէ ընթերցել ամբողջապես. լոկ էքզիստենցիան է վերծանում այն»: Բազում գրքերի գոյության պատճառը լոկ նախասկզբնական տեքստի կորուստն է: Տեքստ, որ գրվել է Աստծո կողմից և երբեք գոյություն չի ունեցել որպես փաստ, այլ լոկ իբրև հետք, ակնարկ, նշան, որոնք նույնպես ջնջվել են:

Գիրը միակ միջոցն է, որ ապահովում է արտաբերված անցողիկ բառի հավերժությունը: Հաճախ նախասկզբնական տեքստը վնասված է, և հաջորդ սերունդները չունեն մեկնության բանալի, սակայն տեքստի մեջ դեռ գոյություն ունի նշանը. մատերիան շարունակում է գոյությունը՝ որպես կորուսյալ ոգու հետք: Դերիդան կարևորում է գիրը՝ որպես հաղորդակցության միջոց՝ նկատի ունենալով ոչ թե դրա կայունությունը, այլ այն հանգամանքը, որ գիրը ազատագրում է տեքստը ինչպես նախնական ենթատեքստի, այնպես էլ՝ հեղինակի կամ այնտեղ քննարկվող նյութերի գերակայությունից: Գիրը հանդես է գալիս որպես յուրօրինակ կտակ, որի փոփոխական ենթատեքստերը հավերժորեն ընթերցելի են: Դերիդան հմայված է գրի ընձեռած հնարավորությամբ. անգամ բոլոր հնարավոր հանցեատերերի բացակայության կամ բոլոր բանական արարածների մահից հետո՝ գիրն իր վերացարկման մեջ պահպանում է կրկնակի ընթերցման՝ ամեն երկրայինի հաղթահարման հնարավորությունը:

Դերիդայի ներմուծած հաջորդ նշանակալից եզրը տարբերությունն է, որի ֆրանսերեն համարժեքները, միևնույն արտասանությունն ունենալով, տարբեր իմաստներ ունեն և տարբեր ձևով են գրվում. *diffé'rence* և *diffé'rance*: Այն հիմնված է Սոսյուրի հետագա քննադատության վրա, ըստ որի նշանակող/նշանակյալ կապը դրական է և հարաբերականորեն կայուն ու ամրագրված: Սակայն, նշանի տարաբաժանումը այս երկու եզրերի, լոգոցենտրիկ ուղղվածությամբ գերակայում է նշանակալը նշանակողի հանդեպ՝ ենթադրելով, որ կոնցեպտը անկախ և նախնական գոյություն է, իսկ ձևը՝ լոկ դրա միջոցը: "Diffé'rance" եզրի կիրարկումը ինչ-որ ատումով պատկերավոր է դարձնում գրի առաջնայնությունը բանավոր խոսքի հանդեպ, քանզի այդ երկու եզրերի տարբերությունը նկատելի է լոկ գրավոր խոսքում: "Diffé'rance" հասկացությունը լեզվի ներքին շարժիչ ուժն է, որն ի ցույց է հանում ոչ միայն տարրերի տարբերության վրա հիմնված իմաստային փոփոխությունները, այլ նաև՝ պատկերավոր է դարձնում այդ

տարրերի ժամանակային հարաբերությունները այլ մասնատված տարրերի հետ, որոնք ևս ասոցիացվում են այլ տարրերի հետ՝ այդպես էլ չվայելելով կատարյալ ներկայությունը: Մասնատված տարրերի այս կոնցեպցիան խախտում է մախկինում ընդունված պարադիգմատիկ/սինտագմատիկ հարաբերությունները՝ նշանակումների անվերջ շղթա ներկայացնող փակ ստրուկտուրայի կոնցեպցիան փոխարինելով առավել բաց, ապակենտրոն համակարգով: Դերիդան այդ գործընթացը ներկայացնում է որպես տարբերությունների խաղ, որ սինթեզի և մասնատման միջոցով թույլ չի տալիս, որ նշանը վերածվի պարզապես ներկա տարրի, քանի որ ոչ տարրերի, ոչ էլ համակարգի ներսում ոչինչ մշտապես ներկա կամ բացակա չէ:

Ստրուկտուրալ հարաբերությունները բինար հակադրությունների միջև, ինչպիսին է ասենք խոսք/գիր գույգը, Դերիդան համարում է ենթակա «փոխարինման կամ հավելման տրամաբանությանը», որ գերիշխում է մարդկային գործունեության բոլոր ձևերում, որոնցում որևէ բան բնորոշվում է որպես մարզվնալ՝ ամբողջության հարաբերությամբ: Այստեղ նա ներմուծում է "supplément" եզրը, որ նույնպես երկիմաստ է ֆրանսերենում, նշանակելով միաժամանակ «փոխարինում» և «հավելում»:

Դերիդան ներկայացնում է գիրը՝ որպես նախասկզբնական նշան՝ ազատագրելով այն հադորդակցային պրագմատիկ նշանակություններից, խոսող կամ լսող սուբյեկտներից: Այդօրինակ գիրը իրականանում է առանց տրանսցենդենտալ սուբյեկտի՝ որպես ինքնակա աստիճանություն, որ ամենուր թողնում է իր հետքերը և դրոշմը: Նախասկզբնական գրի գաղափարը նույնանում է դիոնիսոսյան աստծո գաղափարի հետ, որի ներկայությունն առավել սրվում է նրա բացակայության պատճառով:

Դերիդայի դեկոնստրուկցիայի մեթոդն ուղղված է ապակառուցանելու հիմնարար գաղափարների քարացածությունը և վերացնելու կանոնակարգված հիերարխիկ հարաբերությունները գրի և խոսքի, բնության և մշակույթի, ներքինի և արտաքինի, լոգիկայի և ռիտորիկայի միջև: Այդ մեթոդի կիրարկման ընթացքում հաճախ տեքստերը հակադրվում են հեղինակներին, և բոլոր ժանրային առանձնահատկությունները վերանում են տեքստի համապարփակ ամբողջականության մեջ: Յուրաքանչյուր տեքստ կամ ժանր իր ծագելուց էլ առաջ ամփոփված է եղել համընդհանուր ենթատեքստում, որն էլ պայմանավորում է տեքստի ինքնաբերիկ երևույթականացումը:

Ինչ վերաբերում է գրաքննադատությանը, ապա ըստ էության վերանում է ժանրային հստակ տարաբաժանումը ինչպես գրաքննադատության և գրականության, այնպես էլ՝ գրականության և փոխտեքստային միջև: Գրաքննադատությունը ընդգրկվում է միևնույն

համատեքստում, ինչ՝ գրականությունը կամ փիլիսոփայությունը: Ինչպես հստակ կձևակերպի Պոլ Դե Մանը՝ «...քննադատական տեքստերը, որոնք գիտական չեն, հարկավոր է կարդալ երկակիության այն նույն գիտակցությամբ, որ ի հայտ է գալիս ոչ քննադատական գրական տեքստերի ուսումնասիրման ընթացքում» (Man P. "Blindness and Insight"):

Ինչ վերաբերում է լեզվի նկարագրողական գործառնության, ապա Դերիդան գտնում է, որ ցանկացած դիսկուրս հարկ է վերլուծության ենթարկել պոետիկ լեզվի միջոցով, քանի որ լեզուն ընդհանրապես պայմանավորվում է աշխարհի հայտնագործմանն ուղղված պոետիկ լեզվով: Այս տեսանկյունից՝ լեզուն՝ որպես այդպիսին, նույնանում է գրականության կամ «գրի» հետ:

Միակ տեքստի գաղափարը վերանայվում է, սակայն, Լականի, Բատայի և Ֆոկոյի կողմից, որոնք փորձում են գրականությունը համատեղել սոցիալական, քաղաքական կամ պատմական ենթատեքստերում: Ժ. Բատայը հասարակության մեջ կարևորում է հետերոգեն՝ տարասեռ տարրերի հասկացությունը, որոնք, ենթակա չլինելով մեթոդիկ գիտական հետազոտության, դիմակայում են քաղքենիական կենցաղին, իսկ Մ. Ֆոկոն արևմտյան Լոգոսին հակադրվող հետերոգեն տարրերի մեջ ներառնում է նաև խելագարությունը՝ իր ուսուցիչների շարքում նշելով Բատային:

Օգտագործված գրականության ցանկ

1. Пост-Модернизм, „ Энциклопедия , Минск, 2001.
2. Ю. Хабермас, Философский дискурс о модерне, Москва, 2003.
3. Paul de Man, Blindness and Insight, University of Minncsota, USA, 1997.